ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 հունիսի 2014թ. թիվ 199-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ԹԻՎ 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Դ.Տեր-Սիմոնյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողխորհրդի նախագահի 04.06.2014թ. գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2010թ. հուլիսի 27-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 162-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Դ.Տեր-Սիմոնյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ» մասում «Քաչանյան Անուշ» բառերը փոխարինել «Սահակյան Գայանե» բառերով, իսկ «Պետրոսյան Արուսյակ» բառերը՝ «Նալբանդյան Քրիստինե» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. հունիսի 4
ք.Վանաձոր